

ՍԱՂՄՈՍ 120

ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՍՏՐՈՖ ԲԱԺԱՆՈՒՄՆԵՐ

NASB	NKJV	NRSV	TEV	NJB
Աղոթք ուխտադրուծներից ազատվելու համար	Դառը թշնամիներից ազատվելու աղերս	Թշնամիներից ազատվելու համար արստրյալի աղոթք (Ողբ)	Օգնության աղոթք	Խաղաղության թշնամիները
<u>MT ներածություն</u> Աստիճանների երգ				
120:1-4	120:1-2 120:3-4	120:1-2 120:3-4	120:1-2 120:3-4	120:1-2 120:3-4
120:5-7	102:5-7	120:5-7	120:5-7	120:5 120:6-7

ԸՆԹԵՐՑԱՆՈՒԹՅԱՆ ԵՐՐՈՐԳ ՑԻԿԼ («Սուրբ Գիրքը ճիշտ կարդալու ուղեցույց») *ԸՍՏ ՊԱՐԲԵՐՈՒԹՅԱՆ ԲՆԱԳՐԻ ՀԵՂԻՆԱԿԻ ՆՊԱՏԱԿԻ ՀԵՏՔԵՐՈՎ*

Սա սերտողության ուղեցույց մեկնությունն է, որը նշանակում է, որ դուք եք պատասխանատու Աստվածաշնչի ձեր մեկնության համար: Մեզնից յուրաքանչյուրը պետք է քայլի իր ունեցած լույսի ներքո: Մեկնաբանության մեջ հերթականությունը հետևյալ կերպ է՝ դուք, Աստվածաշունչը և Սուրբ Հոգին: Դուք չպետք է այն զիջեք որևէ մեկնաբանի:

Մեկ անգամ նստելով կարդացեք ամբողջ գլուխը: Գտեք թեմաները: Համեմատեք ձեր թեմաների բաժինները հինգ ժամանակակից թարգմանությունների հետ: Պարբերությունները ներշնչանքով չեն կատարված, սակայն դրանք կարևոր են բնագրի հեղինակի նպատակին հետևելու համար, որը հանդիսանում է մեկնաբանության սիրտը: Յուրաքանչյուր պարբերություն ունի միայն մեկ թեմա:

ՀԱՄԱՏԵՔՍԱՑԻՆ ՀԱՄԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ա. Ես չեմ հավատում, որ MT-ի տված ենթավերնագրերը ներշնչված են: Դրանք առկա են LXX-ում, սակայն չկան Մեռյալ Ծովի Գալարներում: Հաճախ դրանք արտացոլում են հրեական ավանդույթները, սակայն հաճախ պատմականորեն ճշգրիտ չեն:

Բ. Կարծես թե կան մի քանի Սաղմոսներ, որոնք հնարավոր է կապված են թեմաներով և բառապաշարով: Սրանց հաճախ անդրադառնում են որպես «Աստիճանների երգեր» (այսինքն՝ Սաղմոս 120-134):

Այս վերնագրից հասկանալի է, որ նկատի ունի հրեա ուխտավորներին, որոնք մոտենում են Երուսաղեմին տոնական օրվա համար: Այն ֆիզիկապես աստիճաններ բարձրանալու մասին է և, հետևաբար կոչվում է «աստիճան»:

ԲԱՌԵՐԻ ԵՎ ԱՐՏԱՀԱՅՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆ

<p>NASB (ԹԱՐՄԵՑՎԱԾ) ՏԵՔՍՏ. ՍԱՂՄՈՍ 120:1-4 ¹Նեղությանս մեջ ՏԻՐՈՋՆ աղաղակեցի ու Նա ինձ լսեց: ²Ո՛վ ՏԵՐ, փրկիր իմ անձը ստող շրթունքներից ու նենգ լեզվից: ³Ի՞նչ է տրվելու, կամ ի՞նչ է արվելու քեզ, կեղծ լեզու՝</p>
--

4 Հզորի սուր նետերն ու գիհու կայծերը:

120:1 «Նեղության մեջ» Թե ստույգ ինչ է «նեղությունը» (BDB 865 I, ԻԳԱԿԱՆ ԳՈՅԱԿԱՆ) չի սահմանվում, սակայն այն ինչ-որ ձևով կապված է՝

- 1. ստախոս շրթունքների հետ, Սաղմ. 120:2ա
- 2. նենգ լեզվի հետ, Սաղմ. 120:2բ, 3բ

Դրա հետ առնչվող ԲԱՅԻ (BDB 864) ստուգաբանական արմատը մատնացույց է անում այն, ինչ կապում է կամ սանձում՝ ետ պահում: Կիրառվում է որպես նեղ, ձիգ կամ սեղմված տեղում գտնվող բանի համար նկարագրություն: Այս նույն արմատը կիրառվում է հակառակորդի կամ թշնամու համար (BDB 865 III):

«Սեղմվածության» այս հասկացությունը հակառակն է երբայերենի ընդարձակության, բաց տարածքի և ազատության գաղափարի:

❖ **«ՏԻՐՈՋՆ աղաղակեցի»** Նեղության ժամանակներում հավատարիմ հետևորդները դառնում են դեպի ՅԱՀՎԵՆ աղոթքով և Նա լսում է (ԲԱՅԵՐԸ մատնացույց են անում անցյալի իրադարձություն):

Աստվածության անունը ՅԱՀՎԵ է՝ Իսրայելի Աստծո ուխտի անունը:

ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏ ԱՂՈԹՔ

ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ԱՍՏՎԱԾՈՒԹՅԱՆ ԱՆՈՒՆՆԵՐԸ, Դ.

❖ **«Նա ինձ լսեց/պատասխանեց»** Սա անսովոր է այն առումով, որ սաղմոսերգուն չի խնդրում ՅԱՀՎԵԻ օգնությունը, այլ գիտակցում է, որ Նա արդեն ունի օգնություն իր համար:

120:2 «փրկիր իմ անձը» ԲԱՅԸ (BDB 664, KB 717) *Hiphil* ՀՐԱՄԱՅԱԿԱՆ է: Այն մատնանշում է լարված՝ ուժգին աղոթք: Այս արմատի հիմնական իմաստը *Hiphil*-ում նշանակում է «թոցներ», ինչպես որսը գիշատիչի բերանից:

NET Աստվածաշունչը առաջարկում է, որ հհ.2-7-ում հնարավոր է, այն ինչի համար սաղմոսերգուն աղոթեց՝ ՅԱՀՎԵՆ պատասխանեց:

«Անձ» տերմինը (BDB 659) *nepesh* է, որն արտահայտում է տալիս կյանքի ուժ: Տես առցանց Ծննդ. 35:18-ի ամբողջական գրառումը:

ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. NEPESH

❖ **«ստախոս շրթունքներ. . . նենգ լեզու»** Սրանք երբայերեն հոմանիշ գուգահեռներ են:

ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ԵԲՐԱՅԱԿԱՆ ՊՈՆԶԻԱ

120:3 Սաղմոսերգուն անմիջապես դիմում է իր հակառակորդներին: Նա պնդում է, որ ՅԱՀՎԵՆ նրանց կհատուցի իրենց արժանին (ԱԲ, էջ՝ 196, UBS *Ձեռնարկ*, էջ՝ 1048):

120:4

- NASB, JPSOA
- NKJV
- NRSV
- NJB, REB, TEV
- LXX
- Peshitta

- «գիհու վառվող ածուխներով»
- «գիհու ծառի ածուխներով»
- «գիհու կայծքարերով»
- «և կարմիր վառվող փայտածուխ»
- «լքված ածուխներով»
- «բանի որ դրանք տաք փայտածուխներ են»

UBS-ը Աստվածաշնչի Տաունսն և Ֆլորան, էջ՝ 100, բացատրում է, որ այս անապատային թփանման բույսը գործածվում էր Բեդուինների կողմից փայտածուխ ստանալու համար (տես՝ 3 Թագ. 19:4,5, Հոբ 30:4): Այս վառվող տաք փայտը օգտագործվում էր նետեր պատրաստելու համար:

Սաղմ.120:4-ի նկարագրությունը Սաղմ.120:3-ի հարցի պատասխանն է: Ահա թե ինչպես ՅԱՀՎԵՆ կպատասխանի այս «ստախոս լեզուներին» (տես՝ Սաղմ.7:13):

NASB (ԹԱՐՄԵՑՎԱԾ) ՏԵՔՍՏ. ՍԱՂՄՈՍ 120:5-7

⁵Վա՛յ ինձ, որ Մոսեքում պանդուխտ էի

Եվ Կեդարի վրաններում էի բնակվում:

⁶Երկար ժամանակ իմ անձը բնակվեց

Խաղաղությունն ատողի հետ:

⁷Ես խաղաղասեր եմ, բայց երբ խոսում եմ,

Նրանք կռվում են:

120:5 «Վա՛յ ինձ» Սա տարածված Եբրայերեն «ալլաս» կամ «վայ» ԲԱՅԱԿԱՆՉՈՒԹՅԱՆ յուրահատուկ հեզման ձև է (BDB 17, KB 21):

❖ **«Մոսեք... Կեդար»** Մրանք կարծես թե շահագործման օրինակներ են (տես՝ Եզեկ.27:13,21): Հավանաբար սաղմոսերգուն իր հակառակորդներին վերագրում է այս ազգային խմբերի բռնի, մեղավոր հատկությունները:

Մյուս տարբերակն այն է, որ դրանք դիտարկվեն որպես աշխարհագրական հակադրություններ՝ մեկը դեպի հեռավոր հյուսիս, մյուսը՝ հարավ: Եթե այո, ապա դա նկարագրում է՝

1. «ազատի՛ր ինձ այս ատելի մարդկանցից»
2. «խնդրում եմ, թո՛ւյլ տուր, որ տանարից այդքան հեռու չլինեմ»

120:6–7 Սա ակնարկում է, որ սաղմոսերգուի վրա հարձակվողները քաղաքական թշնամիներ են, ովքեր ցանկանում են ռազմական հակամարտություն:

ՔՆՆԱՐԿՄԱՆ ՀԱՐՑԵՐ

Սա ուղեցույց հանդիսացող սերտողության մեկնաբանություն է, որը նշանակում է, որ դուք եք պատասխանատու Աստվածաշնչի ձեր մեկնաբանության համար: Մեզնից յուրաքանչյուրը պետք է քայլի իր ունեցած լույսով: Դուք, Աստվածաշունչը և Սուրբ Հոգին եք մեկնաբանության մեջ առաջին տեղում: Դուք չպետք է այն զիջեք մեկնաբանին:

Քննարկման այս հարցերը կազմվել են ձեզ օգնելու, որպեսզի մտածեք գրքի այս բաժնի գլխավոր հարցերի շուրջ: Դրանք մտածելու տեղիք տվող հարցեր են և վերջնական չեն:

1. Ովքե՛ր են հարձակվում սաղմոսերգուի վրա:
2. Բացատրե՛ք Սաղմ. 120:4-ի պատկերը:
3. Ինչո՞ւ են երկու էթնիկ խմբեր նշվում Սաղմ.120:5-ում:
4. Ինչպե՞ս է Սաղմ.120:6 և 7 բացատրում կամ սահմանում հավանական պատմական միջավայրը: